

1090

A 197

W

ԳՐԱՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. Շ Ի Շ Ո Վ

ԻՆՉՈՒՅԵ ՀԱՐԿԱՎՈՐ  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

355.1

Ղ-60

355.1  
T-60

1 MAR 2010

ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. ՇԻՇՈՎ

ԻՆՉՈՒ ՅԵ ՀԱՐԿԱՎՈՐ ==  
== ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

1008  
36759

1090  
~~1050~~



15 JUL 2013

40. 482

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ամեն տարի աշնանը գյուղն ու քաղաքը  
Կարմիր բանակ ե ուղարկում իր վորդկերանցը:  
Վոմանք գնում են զորանոցները ծառայելու լեր-  
կու տարով, իսկ վոմանք ել հինգ տարով գրանց-  
վում են յերկրային զորամասերում և ամեն տա-  
րի գնում են հավաքի: Ավելի լերիտասարդները,  
մինչ Կարմիր բանակ կանչվելը, անցնում են  
նախազինակոչյան պատրաստությունը: Կառա-  
վարությունը հոգ ե տանում, վորպեսզի վոչվոր  
չխուսափի զինվորական ծառայությունից, զին-  
վորական ծառայությունից խուսափողները պա-  
տըժվում են:

Կարմիր բանակը պահելու, հագցնելու և  
զենքեր պատրաստելու համար փող ե ծախս-  
վում:

Իսկ ինչո՞ւ լե հարկավոր այս բոլորը:  
Այժմ խաղաղ ժամանակ ե, համարյա բոլոր



4968-91

№ 538

Գրառեպվար № 186 ք

Տիրաժ 4000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

յերկրների հետ մեր Խորհրդային կառավարու-  
թյունը հաշտ ե: Գյուղացիներն ու բանվորները  
հոգում են գյուղատնտեսութան ու արդյունա-  
բերության զարգացման մասին: Թվում է, թե  
վոչ մի վտանգի մասին մտածելու կարիք չկա և,  
հետևապես, նրանք կարիք չկա զորք պահելու  
համար փող ծախսել ու յերիտասարդութունը  
անից-տեղից զրկել ու բանակ ուղարկել:

Բայց իրոք այդ այդպես է:

Ի՞նչ են ՈՒԶՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Այն որից, ինչ վերջացել է քաղաքացիական  
պատերազմը, Խորհրդային Հանրապետություն-  
ների Միության բանվորներն ու գյուղացիներն  
զբաղվում են իրենց խաղաղ աշխատանքով: Նրանք  
միայն մի բան են ուզում.— ինչքան կարելի յե  
շուտ և լրիվ կերպով վերականգնել իրենց տըն-  
տեսությունը: Գյուղացիությանը հարկավոր է  
զարգացնել գյուղատնտեսությունը, անասնա-  
պահությունը, անցկացնել հողաշինարարությունը  
և կարգի գցել կոոպերացիան:

Մեծ հոգատարություն է հարկավոր, վոր-  
պեսզի գյուղական խորհուրդները և շրջգործկոմ-  
ները կանոնավորեն, լավացնեն իրենց աշխա-  
տանքը: Պիտի հոգ տանել նաև գյուղատնտեսու-  
թյան ձևերի լավացման մասին: Պիտի սովորել  
պայքարել յերաշտի և վնասատուների դեմ: Ժա-  
մանակ է թողնել արորը և անցնել գութանին ու  
մեքենային:

Հարկավոր ե նաև մտածել դպրոցի, հիվանդանոցի և գրադարանի մասին: Ընդհանրապես Խորհրդային հանրապետությունների աշխատավորները մեծ աշխատանք ունեն անելու:

Գյուղացիները շահագրգռված են, վոր գործարանները ըստ կարելույն շուտ վերականգնվեն և լայնացվեն, վորպեսզի իրենք եժան ապրանքներ ունենան: Բանվորները ձգտում են լայնացնել և լավացնել արտադրությունը Փաբրիկաներում և գործարաններում և իջեցնել ապրանքների գները: Ընդամենը հինգ տարի յե անցել քաղաքացիական պատերազմը վերջացնելուց, իսկ արդեն յերկրի տնտեսությունն աճում ե: Քաղաքացիական պատերազմի ժամանակ ամեն կողմից գյուղացիների և բանվորների վրա հարձակվում եյին գեներալները: Այն ժամանակ ստիպված եր կովել թշնամիների դեմ Խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար, իսկ տնտեսության մասին շատ մտածելու հնարավորություն չկար: Այժմ պատերազմ չկա. նրա հասցրած վերքերը բուժվում են: Բայց տնտեսությունն ավելի հաջող վերականգնելու համար յերկրին հարկավոր ե խաղաղություն: Առաջիկա աշխատանքները մեծ, շատ մեծ են: Շատ բաներում մենք դեռ չետ ենք նախապատերազմյան ժամանակից: Իսկ մեզ հարկավոր ե այնպես կա-

նոնավորել կյանքը, վորպեսզի ավելի ապրանք և հաց ունենանք, քան մինչ-պատերազմյան ժամանակ, և այն ել ավելի եժան:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԳՏՈՒՄ Ե ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Խորհրդային իշխանությունը բանվորա-գյուղացիական իշխանություն ե: Նա իր ամբողջ ուշադրությունը յերկրի տնտեսության վրա յե դարձնում: Բոլոր համագումարներում և խորհրդակցություններում առաջին հերթին գրված են տնտեսական խնդիրներ: Մտածելով տնտեսության վերականգնման մասին, Խորհրդային իշխանությունն ամենից առաջ հոգ ե տանում խաղաղության համար:

Այն որից, ինչ Խորհրդային իշխանությունն սկսել ե բանակցել բուրժուական պետությունների հետ, նա միշտ առաջարկել ե կնքել կայուն հաշտություն: Դրա համար հարկավոր ե, վոր ուրիշ պետությունները կրճատեն զորքը և այնպիսի պայմանագրեր կապեն, վորոնք ապահովեն բոլոր ազգերին խաղաղ կյանք: Սակայն մեր բոլոր առաջարկները խաղաղության և զորքերի միաժամանակ կրճատման մասին մյուս պետությունների կողմից կամ անպատասխան են մնա-

ցել, կամ թե նրանք աշխատել են դատարկ խոսքերով խնդիրը փակել:

Բայց և այնպես 1924 թվից սկսած նրանք ստիպված յեղան մեզ հետ ավելի խաղաղ հարաբերություններ հաստատել, քան առաջ եր: Նրանք մեզ ճանաչեցին և մեզ մոտ ուղարկեցին իրենց դեսպաններին, իսկ մենք ել նրանց մոտ: Մենք ներկայացուցիչներ ունենք բոլոր մեծ յերկրներում, բացի Ամերիկայից (այնտեղ մենք միայն առևտրական ներկայացուցիչներ ունենք): Բոլոր յերկրների հետ մեր Միությունը առևտուր և անում: Ընդհանուր առմամբ Խորհրդային իշխանությանը հաջողվել է ուրիշ պետությունների հետ այնպիսի հարաբերություններ ստեղծել, վոր առաջիկա բոլորի հետ մենք հաշտ ենք:

Ահա թե ինչ եր ասում արտաքին գործերի ժողովրդական կոմիսար ընկ. Չիչերինը Խորհուրդների Համամիութենական III Համագումարում մեր խաղաղասիրական ձգտումների մասին.

«Մեր միջազգային քաղաքականության հիմնական բովանդակությունը, նրա առաջին պահանջը,— դա նրա խոր ձգտումն է դեպի խաղաղություն, նրա խորասպաս խաղաղ ընտյթը: Մեր քաղաքականությունը նպատակ ունի պահպանել խաղաղությունը, ստեղծել կայուն խաղաղ հարաբերություններ յեվ աշա-

կցել ընդհանուր խաղաղության ամրապնդմանը: Դա—հիմնականն է մեր միջազգային քաղաքականության մեջ յեվ կապված է մեր կարգի ընդհանուր հիմքերի ու քաղաքական պայմանների մի շարք հիմնական մոմենտների հետ: Աշխատավոր մասսաները ցանկանում են խաղաղություն, յեվ վոչ միայն մեր Միության աշխատավոր մասսաները, այլևս ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաները»:

Սակայն, խաղաղ քաղաքականություն վարելով, մենք չենք կարող բոլորովին հանգիստ լինել, վոր խաղաղությունը չի խախտվի: Բավական է ուշադիր կերպով դիտել, թե ինչ վերաբերմունք ունեն դեպի ԽՍՀՄ ուրիշ յերկրները, և պարզ կլինի, վոր խաղաղությունը դեռ վերջնականապես ապահովված չէ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՄԵՁ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Մեր յերկիրը չի պատրաստվում վոչվոքի նվաճել, վոչվոքից հողեր խլել: Մեր յերկիրը միայն խաղաղություն և խաղաղ աշխատանք է ցանկանում: Բայց ուրիշ յերկրներում դեռևս իշխանության գլուխ է անցած բուրժուազիան:

Այդ բուրժուական յերկրները թեպետև մեզ ճանաչել են, բայց և այնպես մեզ թշնամի յեն: Հիշենք, թե ինչպես 1917 թվին, յերբ իշխանութունը անցավ խորհուրդներին, գործարանատերերն ու ազնվականները պատերազմ սկսեցին խորհուրդներին դեմ: Նրանց պաշտպանում էլին և՛ Ֆրանսիան, և՛ Անգլիան, և՛ ուրիշ յերկրներ: Նրանք հողատերերին և գործարանատերերին տալիս էլին փող, հանդերձանք և զենք և մինչև անգամ փորձում էլին իրենց ուժերով Սորհրդային իշխանության դեմ յելնել: Բայց վնչ նրանց և վնչ էլ սպիտակ գվարդիականներին չհաջողվեց հաղթել Սորհրդային իշխանությանը: Իրենց պարտութունից հետո բուրժուակալից, հողատերերից, տերտերներից, իշխաններից, գեներալներից և սպաներից շատերը փախան արտասահման: Գեներալ Վրանգելի հրամանատարության ներքո նրանք իրենց հետ տարան մի փոքրիկ բանակ:

Այդ ամբողջ ընկերութունը ապաստան գտավ բուրժուական յերկրներում և պաշտպանութուն՝ նրանց կառավարութունների կողմից: Այնտեղ նրանց տալիս են փող, սպաները ստանում են ռոճիկ, զգեստ. իսկ այն բանակի մի մասը, վոր գնացել էր Վրանգելի հետ, պահվում է իբրև բանակ: Այս բոլորը հաստատում են

այն, վոր կապիտալիստական յերկրները թշնամի յեն մեզ: Այսպես նրանք չեյին պաշտպանի մեր թշնամիներին:

Բուրժուական յերկրների բոլոր թերթերը դեռ մինչև հիմա յել մեր Միության մասին սուտ լուրեր են տարածում: Յեթե վորևե յերկրում բանվորները գործադուլ են կազմակերպում, ապստամբութուն բարձրացնում կամ ավելի սերտորեն կապվում կոմունիստական կուսակցության հետ, նպատակ ունենալով կովել հողատերերի և կապիտալիստների դեմ, բուրժուակալի անմիջապես սկսում է ճշալ և բղավել, վոր այդ բոլորը ՍՍՀՄ գործն են: Բուրժուակալի զլխին թափված բոլոր դժբախտութունները վերագրվում են մեր Սորհրդային Միությանը: Ամեն մի պատեհ դեպքում բուրժուական յերկրներում կոմունիստներին հալածում են, բանտ են նստացնում, իսկ հաճախ էլ սպանում են: Այս բոլորը կատարվում է մեր յերկրի ազդեցության դեմ կովելու պատրվակի տակ: Բացի այդ, կապիտալիստական յերկրներն աշխատում են միացյալ Ֆրոնտ ստեղծել մեր Սորհրդային պետության դեմ: Ճիշտ է, այդ նրանց դեռ չի հաջողվել: Բայց նրանց այդ աշխատանքը, վոր ուղում են թշնամական մի միութուն ստեղծել մեր դեմ, հենց այն է առում, վոր նրանք մնում են մեզ թշնամի:

## ԻՆՁՈ՞Ւ ՅԵ ԱՏՈՒՄ ՄԵՋ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ

Ամբողջ բանը նրանումն է, վոր մեզ մոտ իշխանությունը բանվորների և գյուղացիների ձեռքին է: Բուրժուազիան այս բանի հետ չի կարողանում հաշտվել: Նրանք վախենում են, վոր մեր որինակը կարող է ներգործել նրանց յերկրի բանվորների և գյուղացիների վրա: Կապիտալիստական յերկրներում բանվորներն ու գյուղացիները, մանավանդ պատերազմից հետո, մեծ ճնշում են կրում: Բուրժուազիան աշխատում է հարկերի և աշխատավարձի պակասեցման միջոցով պատերազմի վրա ծախսված բոլոր միջոցները դուրս բերել բանվորներից և գյուղացիներից: Բանվորներն ու գյուղացիները դրանից դժգոհ են. բայց նրանք զիտեն, վոր այդ ճնշումից կարող են ազատվել միայն բուրժուազիային հաղթելով, ինչպես այդ արել են մեր Միության բանվորներն ու գյուղացիները: Նրանք տեսնում են, վոր մեր յերկրում ահա 8-րդ տարին է, ինչ բանվորներն ու գյուղացիները, չնայած սովի ու պատերազմի տարիներին, հաջողությամբ վերականգնում են մի այնպիսի հսկա յերկրի տնտեսությունը, ինչպիսին է մեր Խորհրդային Միությունը: Նրանք տեսնում են, վոր մեզ մոտ բանվորներն ու գյուղացիներն այնպիսի իրավունքներ

ունեն, վորպիսին չունեն ուրիշ յերկրների բանվորներն ու գյուղացիները: Այդ պատճառով էլ իրենց բուրժուազիայի հետ կռվելիս նրանք աշխատում են ձեռք բերել նույնը, ինչ մենք ենք ձեռք բերել:

Ահա ամենից շատ հենց դրանից է վախենում բուրժուազիան: Յեվ այդ պատճառով է, վոր չնայած մեզ հետ կնքել է դանազան պայմանագրեր, շարունակ պատրաստ է այդ պայմանագրերը խախտել: Դեպի մեզ ունեցած ատելության ամենազլխավոր պատճառներից մեկն էլ այն է, վոր մինչև հեղափոխությունն ոտարեկրյա բուրժուազիան մեր յերկրում ունեցել է հսկայական հարստություններ: Մինչև հեղափոխությունը մեր յերկրում շատ Փաբրիկաներ, գործարաններ, հանքահորեր, անտառներ և առևտրական հիմնարկություններ պատկանելիս են յեղել ոտարեկրացիների: Հեղափոխությունից հետո այդ բոլորն անցել է մեր բանվոր-գյուղացիական իշխանության ձեռքը: Վերև բան վերադարձնել մենք չենք ել մտածում: Բուրժուազիան մեզ այդ ներել չի կարող: Նա միշտ կհուսա, վոր այսպես կամ այնպես այդ բոլորը յետ կստանա ու կծածկի նաև այն վաստները, վոր կրել է հեղափոխության ժամանակ:

Բացի այդ՝ ոուսաց թագավորը մինչև պա-

տերազմը և պատերազմի ժամանակ ուրիշ յերկրրներում մեծ. մեծ պարտքեր ե արել: Այդ հրակայական գումարները ծախսվել են պատերազմի վրա: Խորհրդային իշխանութիւնը հրաժարվել ե վճարել այդ պարտքերը: Խորհրդային իշխանութիւնն ասում ե, վոր պատերազմը բանվորների և գյուղացիների շահերի համար չե մղվել, հետեւաբար և այդ պարտքերը վճարել չեն ուզում վնչ գյուղացիները, և վնչ ել բանվորները: Պարտքերից հրաժարվելը մեծ վնաս հասցրեց բուրժուազիայի գրպանին, և նրա վոխը մեր դեմ ավելի ևս աճեց:

Ատում ե մեզ բուրժուազիան և նրա համար, վոր մենք բոլոր ճնշված ժողովուրդների հետ շատ բարեկամական հարաբերութիւնների մեջ ենք: Հարուստ յերկրների կառավարութիւններն ու բուրժուազիան նվաճել են շատ թույլ ժողովուրդներ: Նրանք ճնշում են նրանց և անագին հարստութիւններ կորզում: Իսկ այդ ժողովուրդները խիստ աղքատութիւն մեջ են ապրում:

Բոլորովին այլ կերպ ե վարվում Խորհրդային կառավարութիւնը: Մեր յերկրում բոլոր ժողովուրդները հավասար են: Ամեն մի ժողովուրդունի իր Խորհրդային իշխանութիւնը: Վոչվոք վոչվոքի չի ճնշում: Այս հանգամանքը դեպի մեզ

ե գրավում բոլոր յերկրների ճնշված ժողովուրդներին: Բուրժուական պետութիւններից ճնշված բոլոր ժողովուրդները ձգտում են մոտենալ մեզ, վորովհետև միայն մեր ժողովուրդների ազատ միութիւն մեջ են տեսնում իրենց դաշնակիցը և իրենց շահերի պաշտպանը: Իսկ հենց դրանից ել վախենում ե բուրժուազիան: Նա վախենում ե, թե մի գուցե իր կողմից ճնշված ժողովուրդներն ապստամբեն իրենց ստրկացնողների դեմ և վռնդեն իրենց հայրենիքից: Յեվ այն ժամանակ բուրժուազիան կզրկվեր յեկամուտների այն մեծ աղբյուրից, վոր ստանում ե թույլ ժողովուրդներին տիրելու շնորհիվ: Այժմ հասկանալի չե, թե ինչու բոլոր յերկրների բուրժուազիան մեզ թշնամի չե և պաշտպանում ե մեր բոլոր թշնամիներին՝ գեներալներին, իշխաններին, տերտերներին, գործարանատերերին և հողատերերին:

## ԻՆՉ Ե ՈՒՋՈՒՄ ԲՈՒՐԺՈՒԱՋԻԱՆ

Պարզելով այն, թե ինչու յե ատում մեզ բուրժուազիան, ամեն մեկին պարզ կլինի և այն, վոր նա ցանկանում ե վոչնչացնել մեր յերկրում Խորհրդային իշխանութիւնը և վերականգնել այն կարգերը, վորոնք գոյութիւն են ունեցել մինչև

հեղափոխութիւնը: Իսկ այդ նշանակում ե, վոր հողատերերն ու գործարանատերերը, վորոնք այժմ գտնվում են արտասահմանում, պիտի նորից վերադառնան Ռուսաստան, յետ վերցնեն իրենց պատկանած հողն ու գործարանը, պահանջեն գյուղացիներից ու բանվորներից այն վնասները, վոր նրանք ստացել են հեղափոխութեան ժամանակ, և հաստատեն իրենց բուրժուական իշխանութիւնը: Արտասահմանյան բուրժուական գիտե, վոր յեթե Ռուսաստանում նորից գահ բարձրանա թագավորը, կամ գործարանատերերի և հողատերերի իշխանութիւն լինի, այն ժամանակ նա կստանա իր բոլոր պարտքերը և նորից կտիրանա իր կորցրած բոլոր հարստութիւններին:


Յեւ բացի այդ՝ այն ոգնութեան փոխարեն, վոր մեր դեմ մղվող պատերազմում մյուս յերկրների բուրժուական ցույց կտա ուսական կալվածատերերին և գործարանատերերին, ցարական կամ բուրժուական իշխանութիւնն օտարերկրացիներին ձեռնտու պայմաններով շահագործելու կտա մեր հարստութիւնները: Յեթե բուրժուազիային հաջողվի իր այս յերգաններն իրականացնել, պարզ ե թե ինչ ծանր լծի տակ կընկնեն գյուղացիներն ու բանվորները:

Ահա թե ինչ ե ուզում բուրժուազիան: Վոչ

մի գիտակից բանվոր, վոչ մի գյուղացի չի ցանկանա, վար նորից հաստատվեն հին կարգերը և գյուղացու վզին ընկնեն այդ հսկայական վճարումները: Ամեն վոք տեսնում ե, վոր առանց նախկին հողատերերի և գործարանատերերի մենք կարողանում ենք կարգավորել մեր տնտեսութիւնը: Իսկ այժմ, Խորհուրդների Համամիութենական III Համագումարի վորոշումից հետո, գյուղացիութեան առաջավելի մեծ հնարավորութիւններ են ստեղծվում ուժգին թափով վերականգնելու իր տնտեսութիւնը: Հարկերի իջեցումը ցույց ե տալիս, վոր մենք աստիճանաբար հարկային յեկամուտներից անցնում ենք վոչ-հարկային յեկամուտներին: Իսկ այդ նշանակում ե, վոր մեր արդյունաբերութիւնը զարգանում ե, վոր առհասարակ աճում ե մեր տնտեսութիւնը: Այդ նշանակում ե, վոր հետագայում Խորհրդային իշխանութեան և կոմմունիստական կուսակցութեան դեկավարութեամբ մենք կարող կլինենք ել ավելի շատ ու լավ ծավալել մեր խաղող շինարարութիւնը: Արդեն հեռու չե այն ժամանակը, յերբ մեր տնտեսութեան բոլոր մասերում մենք զգալիորեն հարուստ կլինենք: Նշանակում ե, բանվորներն ու գյուղացիները վոչ մի ցանկութիւն չունեն յետ դառնալ բուրժուական լծին:

4968-91

1008  
36759



## ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԼԱՎ ՁԵՆ ՅԵՎ ԻՐԱՐ ՇԵՏ

Բացի բուրժուական յերկրները մեզ վրա հարձակվելու վտանգից, մեզ սպառնում ե և մի այլ վտանգ: Կապիտալիստական յերկրները վոչ միայն մեզ են թշնամի, այլ և չեն կարողանում հաշտ ապրել իրար հետ ել: Ճիշտ ե, նրանք այժմ իրար հետ չեն պատերազմում, բայց համաշխարհային պատերազմի ժամանակ գրաված հողերը և ավարը բաժանելու համար անվերջ վիճում են իրար հետ: Այդ վեճերը նրանց թույլ չեն տալիս միանալ մեր դեմ: Նրանք բոլորը մեզ ատում են, բայց չերը ցանկանում են միացած ուժերով մեզ վրա հարձակվել, այդ նրանց առայժմ չի հաջողվում: Բացի այդ՝ մեզ հետ պատերազմելու դեպքում նրանք վախենում են նաև իրենց բանվորներից: Սակայն, տեսնելով՝ ինչպես աճում և ամրանում ե մեր Միությունը, նրանք ավելի և ավելի յեն ցանկանում մեր կորուստը և կարող են վորոշել ու հարձակվել մեզ վրա: Մենք չպիտի մոռանանք այս: Բայց նրանց մեջ փոխադարձ թշնամությունն ել վտանգավոր ե խաղաղ կյանքի համար: Չե՞ վոր մինչև որս ել իրար չեն կարողանում հասկանալ այնպիսի մեծ յերկրներ, ինչպիսին Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և ուրիշները:

Այն որից, ինչ վերջացավ պատերազմը, և Գերմանիան հաղթվեց, նրան ստիպեցին հսկայական վճարումներ կատարել Ֆրանսիային, Անգլիային և Ամերիկային: Բայց հենց Գերմանիան սոսկալի աղքատացավ պատերազմի ժամանակ, և այդ վճարումները նրա համար ավելի քան ծանր են: Իսկ Ֆրանսիային ել փող շատ ե հարկավոր: Նա այդ պահանջում ե Գերմանիայից և սպառնում ուժով: Անգլիան նույնպես ցանկանում ե, վոր Գերմանիան իրեն ել վճարի, բայց վախենում ե, վոր այդպիսով նա շատ կթուլանա, և հրապարակում ամենից ուժեղը կմնա Ֆրանսիան: Դա նրան ձեռնտու չե, վորովհետև ինքն ե ուզում ամենից ուժեղը լինել: Բայց Ֆրանսիան ել այդ մտքի հետ չի ուզում հաշտվել: Իսկ Գերմանիան ել դիմադրում ե վճարումներին, վորովհետև վճարելու միջոց չունի: Վերջիվերջո վախ կա, վոր նրանք նորից կկռվեն: Գործին խառնվում ե նաև Ամերիկան, վոր նույնպես ցանկանում ե իր բաժինն ստանալ: Առայժմ նրանք զանազան պայմանագրերով մի կերպ յուր յեն գնում: Սակայն այդ պայմանագրերից և վոչ մեկը դեռ չի կարողացել նրանց վերջնականապես խաղաղացնել:

Տարեցտարի նրանց միջև վեճերը ավելի և ավելի յեն շատանում, իսկ մենք գիտենք, վոր

բուրժուական յերկրները բոլոր վեճերը վերջի-  
վերջո լուծում են պատերազմի միջոցով: Բայց  
յեթե այդպիսի մի պատերազմ ծագե, նա վտան-  
գավոր կլինի նաև Խորհրդային Հանրապետու-  
թյունների Միության համար:

Վտանգը նրանցում է, վոր բուրժուական  
յերկրներն առաջին հերթին կաշխատեն իրենց  
հաշիվը վերջացնել Խորհրդային Միության հետ:  
Նրանք գիտեն, վոր հենց ԽՍՀՄ-ի գոյութու-  
նը թույլ չի տալու, վոր կողոպտիչ պատերազմ  
վարեն, վորովհետև մենք կբացատրենք ամբողջ  
աշխարհի աշխատավորներին, վոր բուրժուական  
կողոպտիչ պատերազմի հեղինակն է: Այլ պա-  
տերազմներ, վոր կողոպտիչ բնույթ չունենան,  
բուրժուական վարել չի կարող: Այդ մենք գի-  
տենք 1914 թվի պատերազմի օրինակով:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այսպիսով թեպետև մենք զբաղված ենք  
խաղաղ աշխատանքով և ուզում ենք խաղաղ ապ-  
րել, բայց և այնպես մեզ մեծ վտանգներ են  
սպառնում: Մենք նրանցից կարող ենք ազատվել  
այն դեպքում, յերբ կունենանք հզոր ուժ — կար-  
միր բանակը:

Այդ մեզ կտակել է նաև Վլադիմիր Իլիչ  
Լենինը: Նա գրել է.

«Մենք պետք է հաղթենք վոչ միայն սպի-  
տակ-զվարդիականներին, այլ յեվ համաշ-  
խարհային իմպերիալիզմը: Դրա համար ա-  
մենից շատ հարկավոր է կարմիր բանակ:  
Թո՛ղ պուղացիական Խորհրդային Ռուսաս-  
տանի ամեն մի կազմակերպությունն սուս-  
ջին տեղը դնի բանակի հարցը»:

Այս խոսքերով Վլադիմիր Իլիչը նախագգու-  
շացնում է վտանգի մասին և ասում, վոր մեր  
կարմիր բանակն ընդունակ պիտի լինի մեզ պա-  
տերազմ հայտարարելու դեպքում ջարդել նաև  
համաշխարհային բուրժուական (իմպերիալիստ-  
ների) բանակը: Յերբ 1918 թվին իմպերիալիստ-  
ները փորձեցին մեր դեմ հանել իրենց զորքերը,  
մենք նրանց փառավորապես յետ քշեցինք: Ավե-  
լի լավ դիմադրություն պետք է ցույց տանք  
այժմ, յերբ նրանք փորձեն խանգարել մեր խա-  
ղաղությունը:

Մի ուրիշ տեղ ընկ. Լենինը գրել է.

«Ռազմական պատրաստականությունը  
մենք պետք է ունենանք համենայն դեպս: Հույս  
չլինելով իմպերիալիզմին արդեն հասցրած  
հարվածների վրա, մենք մեր կարմիր բա-  
նակը ինչ ել ուզում է լինի պիտի մարտա-

կան դրութեան մեջ պահենք յեվ ուժեղացնենք նրա ուղղութեան շարժումը»:

Վլադիմիր Իլիչի այս պատգամը կիրառուում է, վոր մեզ փրկում է սպառնացող վտանգներից: Նույնն է ասել Խորհուրդների Համամիութենական III Համագումարում ԽՍՀՄ-ի ժողովուրդի նախագահ ընկ. Ռիկովը:

«Ներկայումս մեր զինվորական նախապատրաստության յեվ մեր Միության պաշտպանության հարցերը ավելի լուրջ յեվ պատասխանատու նշանակություն ունեն, քան այդ առաջ եր: Մեզ անհրաժեշտ է մեր զինված ուժերի կացությունն այն աստիճանի հասցնել, վոր կարողանանք վոչ միայն լավ, այլ յեվ վատ դեպքում պաշտպանել մեր ընկերացիական հանրապետության անկախությունն ու ինքնուրույնությունը»:

Այսպիսով պարզ է, վոր մեր խաղաղ աշխատանքն ու յերկրի անկախությունը կարող ենք պաշտպանել միայն ուժեղ կարմիր բանակով: Դրա համար ել, չնայած խաղաղ պայմաններին, ամեն տարի կարմիր բանակի շարքերը կանչվում է զինվորական տարիքի հասած նոր յերիտասարդություն: Ինչքան ել վոր ծանր է տնտեսությունից պոկել յերիտասարդ ուժերը, բայց և այնպես դա հարկավոր է հենց նույն

գյուղացիների և բանվորների շահերի համար: Ճիշտ է, մեր բանակը մեծ չէ: Քաղաքացիական պատերազմի ժամանակ, յերբ ամեն կողմից շրջապատված եյինք գեներալներով, մենք ստեղծեցինք մի հսկա, համարյա վեց միլիոնանոց, կարմիր բանակ: Պատերազմը վերջանալուց հետո Խորհրդային իշխանությունը կրճատեց բանակը: Այժմ մեր բանակն ավելի քիչ է, քան ցարի ժամանակն էր, և ընդամենը վեց հարյուր հազար մարդուց է կազմված: Ընդ վորում բոլոր բանակը զորանոցներում չէ: Միայն նրա մի մասն է մշտական բանակ, իսկ մյուս զգալի մասը, համարյա ընդհանուր բանակի կեսը, տեղիտեղի բանակ է: Տեղիտեղի, յերկրային բանակը այն բանակն է, յերբ կարմիր-բանակայինը մշտական ապրում է տանը և միայն տարին մի անգամ գնում է վարժական հավաքի: Հավաքի ժամանակ նա պետք է սովորի զինվորական գործը և պատրաստ լինի զենքը ձեռքն առնել այն ժամանակ, յերբ Խորհրդային իշխանությունը վտանգ սպառնա: Յերկրային ծառայության մեջ է համարվում հինգ տարի: Կարգային (բնակազմ) բանակում կարմիր-բանակայինները նույնպես կարճ ժամանակում են սովորում իրենց գործը— ընդամենը յերկու տարվա մեջ: Այդ յերկու տարվա ընթացքում նրանք պիտի լավ ընտելանան

գենք գործածելուն, դառնան գրագետ և գիտակից: Այդ բոլորը կարելի չե անել այն դեպքում, յերբ բանվորներն ու գյուղացիներն ուշադիր վերաբերվեն դեպի Կարմիր բանակը: Այդ կնշանակե, վոր վոչ մի դեպքում զինվորական ծառայությունից չպիտի խուսափել: Հատկապես դա անհրաժեշտ է յերկրային զորամասերում: Զորահավաքներին անխտիր բոլորն ել պետք է ներկայանան: Իրենք գյուղացիները պիտի կովեն նրա դեմ, ով կփորձի խուսափել զորահավաքից: Պետք է շատ խիստ լինել բոլորի նկատմամբ, ովքեր խուսափում են Կարմիր բանակում ծառայելուց:

Վ. Ի. Լենինը Կարմիր բանակին ոգնելուց բոլոր խուսափողներին դավաճաններ եր անվանում: Յեվ իսկապես, միայն բանվորա-գյուղացիական գործին դավաճանողները կարող են խույս տալ բանակում ծառայելուց, նրան ոգնելուց: Չէ՞ վոր Կարմիր բանակն ամենից առաջ հարկավոր է գյուղացիներին և բանվորներին, նրանց խաղաղ աշխատանքը պաշտպանելու համար: Բանվորներն ու գյուղացիները պիտի սերտ կապ պահեն ամբողջ Կարմիր բանակի հետ: Նրանց զավակները, վորոնք ամեն տարի բանակ են կանչվում, պիտի գիտակցեն, վոր նրանք գնում են պաշտպանելու բանվորա-գյուղացիական գործը:

## Ի՞նչ է ՍՈՎՈՐՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Վորովհետև Կարմիր բանակի նպատակն է պաշտպանել բանվորներին ու գյուղացիներին հարուստ-հողատերերից ու գործարանատերերից, դրա համար ել նա այլ կերպ է կազմված, քան ուրիշ բանակները. և այնտեղ սովորեցնում են այն, ինչի մասին առաջներում զինվորը մինչև անգամ ծպտուն չեր կարող հանել: Առաջներում, յերբ նորակոչիկներին ցարի բանակ էյին ուղարկում, ամբողջ գյուղը լաց եր լինում, կասես տաժանակիբ աշխատանքների ուղարկելիս լինելին իրենց զավակներին: Նորակոչիկները հարբում էյին, անկարգություններ անում, գիտե՞նալով, վոր յերկար տարիներով զրկվում են ազատ կյանքից և ընկնում ցարական ծառայության ծանր պայմանների մեջ:

Կարմիր բանակում հիմա գործն այլ կերպ է դրված: Կարմիր-բանակայինը նույնպես քաղաքացի չե, ինչպես վոր Խորհրդային Միության բոլոր քաղաքացիները: Նա մասնակցում է խորհուրդների ընտրության, և նրան կարող են ընտրել խորհուրդների անդամ:

Նա սովորում է գենքը ձեռքին պաշտպանել աշխատավորներին հարուստներից: Իսկ առաջ զինվորին սովորեցնում էյին պաշտպանել հողա-

տերերին և գործարանատերերին բանվորներից ու գյուղացիներից: Վորովհետև այժմ ստիպված ենք կռվել վոչ միայն հրացանով, այլև զենքի այլ տեսակներով, կարմիր-բանակայինն ստիպված է ուսումնասիրել պատերազմի շատ նոր տեխնիկական ձևերը: Այս հանգամանքը կարմիր-բանակայինի նախապատշաճությունը ավելի դժվարացնում է և պահանջում նրանից ավելի զբազիտություն: Այդ պատճառով էլ կարմիր-բանակայիններին զինվորական գիտությունների հետ միասին սովորեցնում են զբազիտություն, թվաբանություն և այլն: Կարմիր-բանակայինը բանակում ստանում է նաև քաղաքական դաստիարակություն և սովորում է վոչ միայն պատերազմել, այլև հասկանալ, թե ում համար և ում դեմ պետք է պատերազմի բանվորն ու գյուղացին: Զինվորական կրթության հետ միասին կարմիր-բանակայինը սովորում է նաև գյուղի աշխատանքը: Խաղաղ ժամանակը, հեռանալով բանակից, կարմիր-բանակայինն իր հետ գյուղ է բերում այն գիտելիքները, վոր ստացել է բանակում: Մենք այժմ տեսնում ենք, վոր գորացրված կարմիր-բանակայինները գյուղի գործունյա աշխատավորներն են, մասնակցում են խորհուրդներին, փոխոգնություն կոմիտեներին, կոոպերացիային, նրանք ոգնում են Խորհրդային իշխանության շի-

նարարությունը, ոգնում են կարգի գցելու տրնաեսությունը: Կարմիր բանակը հանդիսանում է գյուղի համար մի լավ դպրոց և դրանով, բացի յերկիրը պաշտպանելուց, առհասարակ ոգուտ է բերում մեր յերկրին:

Կարմիր բանկը—դա արդեն այն է, ինչ վոր ցարի բանակն էր:

Ահա թե ինչ է ասում Վ. Ի. Լենինը Կարմիր-բանակի մասին:

«Հին բանակը, զորանոցային բիրտ ուսուցման վրա կառուցված բանակն անցել է պատմության գիրկը: Նա ջարդուփշուր է արված, լեվ նրանից քարը քարի վրա էի մնացել»:

## Ի՞նչ ՎՈՐՈՇԵՑ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄՈՒԹԵՆԱԿԱՆ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

1925 թվի հունիս ամսում Մոսկվայում կայացավ Խորհուրդների Համամիութենական III Համագումարը: Այդ համագումարում մեր յերկրի տնտեսության, մանավանդ գյուղատնտեսության ամրապնդման շուրջը շատ հարցեր ծեծվեցին: Այդ հարցերի շարքում վորոշվում էր նաև մեր յերկրի պաշտպանության հարցը: Զինվորական և ծովային գործերի ժողովրդական կոմիտար ընկ. Միխայիլ Վասիլևիչ Ֆրունզեն հա-

մագումարին զեկուցեց Կարմիր բանակի դրու-  
թյան մասին: Համագումարը լսելով և քննելով  
զեկուցումը, վորոշում հանեց ամրապնդել Կար-  
միր բանակը:

Ահա թե ինչ ասաց համագումարը.

«Սաղաղության ձգտելը և բոլոր պետու-  
թյունների հետ բարեկամական հարաբերություն-  
ներ ստեղծելը յեղել և մնում է Սորհրդային  
Միության միջազգային քաղաքականության հիմ-  
նական սկզբունքը: Այդ խաղաղասեր քաղաքակա-  
նության անվիճելիության հավաստիքն այն կրճա-  
տումներն են, վորոնց յենթարկվել է Կարմիր բա-  
նակը, վորի թիվը  $5\frac{1}{2}$  միլիոնից ալժմ հասցրած  
է 560 հազարի»:

Այս խոսքերից յերևում է, վոր Սորհրդային  
իշխանությունն ամենից առաջ ցանկանում է խա-  
ղաղություն: Բայց վորովհետև վտանգը դեռ չի  
անցել, համագումարը վորոշեց.

«Առաջվա պես համարելով բանվորա-գյուղա-  
ցիական կառավարության ամենագլխավոր նպա-  
տակը կանոնավոր փոխհարաբերություններ ստեղ-  
ծելն ուրիշ յերկրների հետ և Սորհրդային Միու-  
թյան խաղաղ դարգացումն ապահովել, համագու-  
մարն առաջարկում է Կենտրոնական Գործադիր  
Կոմիտեյին յեվ Խ.Ս.Հ. Միության Ժողովրդական  
Կոմիսսարների Սորհրդին դրա հետ միասին ան-

հրաժեշտ միջոցներ ձեռք առնել հետազայում ա-  
վելի ևս ամրապնդելու Կարմիր բանակի ռազմու-  
նակությունը, իբրև խաղաղություն պահպանե-  
լու ամենաեղևկան միջոց»:

Ըստ համագումարի վորոշման, Կարմիր բա-  
նակի ամրապնդումը տեղի պիտի ունենա ռազ-  
մական արդյունաբերության լայնացման ուղիով:  
Այդ անհրաժեշտ է, վորպեսզի կարելի լինի ավե-  
լի լավ զինել Կարմիր բանակը: Բացի այդ՝ հա-  
մագումարն անհրաժեշտ է համարում.

1) Բարեկարգել ճանապարհները, վորովհե-  
տև լավ ճանապարհներով ալելի արագորեն կա-  
րելի յե զորքեր տեղափոխել.

2) Զարգացնել կապը՝ հեռախոսը, հեռագիրը  
և կապի այլ միջոցները.

3) Զարգացնել ձիաբուծությունը վոչ միայն  
տնտեսության, այլև բանակի համար.

4) Գրավել բնակչությանը, վոր ուսումնա-  
սիրի զինվորական զործը.

5) Ուժեղացնել յերիտասարդության Ֆիզի-  
կական դաստիարակությունը:

Յեթե այս բոլորն իրագործվի, Կարմիր բա-  
նակը թեպետև այնքան էլ մեծ չէ, բայց և այն-  
պես մեր խաղաղ աշխատանքի ուժեղ պաշտպանը  
կլինի:

Համագումարը կատարելապես հավանություն

տվեց մեր յերկրում յերկրային բանակ մտցնելուն: Ահա թե ինչ ե ասված համագումարի դրան վերաբերող վորոշման մեջ.

«Համագումարն ընդունում ե, վոր տերրիտորիալ սխտեմը բանվորա-գյուղացիական մասսաներում ստացել ե իր սկզբունքային հավանությունը և, թեթևացնելով բնակչության և պետական բյուջեյի բեռը զինված ուժերը պահելու գործում, միաժամանակ ամենալավ միջոցն ե՝ զողելու բանվորներին ու գյուղացիներին»:

Յերկրային բանակն ամրապնդելու և լավացնելու համար համագումարն առաջարկեց Խորհրդային Միության և դաշնակից հանրապետությունների կառավարություններին կիրառել մի շարք միջոցներ: Ահա թե ինչ ե ասված համագումարի վորոշման մեջ այդ միջոցների առթիվ. բ) տեղական խորհրդային մարմիններին հրավիրել, վոր լայն աջակցություն ցույց տան զինվորական վարչությանը կազմակերպելու կարճատև վարժական հավաքներ, վորոնք տերրիտորիալ միլիցիոն սխտեմի ժամանակ ուղղակի պատրաստականության հիմքն են կազմում. գ) աջակցել զինվորական իշխանությանը կանոնավորելու հավաքների ընդմիջումների ժամանակ տեղի ունեցող աշխատանքները, համարելով այն տերրիտորիալ կազմումների ուղղակիությունը

ապահովելու ամենաանհրաժեշտ պայմանը, և տալով նրան պարտադիր բնույթ: Մասնավորապես պիտի հատուկ նպատակ զնել վերացնելու անգրագիտությունը յերկրային մասերի կարմիր-բանակայինների և նախակոչիկները մեջ, զարգացնել խրճիթ-ընթերցարաններին, ակումբներին և կուլտ-կրթական հիմնարկություններին կից զինվորական անկյունները. դ) կազմակերպել պետական վարկավորում հեծելազոր և թընդանոթածիզ մասերին ձիեր մատակարարողների համար, յերբ նրանք շարքային տիպի ձիեր են գնում. նույն նպատակով հարկադրման սխտեմում հաշվառել նրանց տրվելիք արտոնությունները. ե) համարելով մինչգինակոչյան պատրաստականությունը կրճատ վարժությունների ժամանակ աշխատավորների զինվորական վարժության հիմնական ողակը, առանձին կառավարական հրահանգով պարտադրել տեղական գործադիր կոմիտեներին հատկացնել վարժական կետերին կահավորված շենքեր իրենց ամեն տեսակի հարմարություններով, նույնպես կազմակերպել վարժավորների հասարակական սնունդը՝ ապահովելով այն տեղական կամ պետական բյուջեյով. զ) զինվորական ծառայության այս ստեղծված սխտեմը, ինչպես նաև ամեն մի քաղաքացու զինապարտության իրավունքներն ու

պարտականություններն ամրապնդելու համար— հերթական զինակոչին անցկացնել զինվորական ծառայության պարտադիր որենքը»:

Բացի այդ՝ համագումարը հոգ տարավ առհասարակ լավացնելու կարմիր բանակի դրու-  
թյունը: Դա հարկավոր եր անել, վորպեսզի թե-  
թեանա ծառայությունը, և լավանա կարմիր բա-  
նակայինների վարժությունը:

Համագումարի վորոշման մեջ ասված է.  
«Կառավարության և աշխատավոր մասսաների  
կողմից կարմիր բանակին ցույց տրված ուշա-  
դրությունն ու հոգատարությունը պիտի հնա-  
րավորություն տան ամեն մի զինվորականի  
կատարելապես և անբաժան կերպով իր ամբողջ  
ուժերը նվիրելու աշխատավորների ազատագրու-  
թյան մեծ նպատակներին»:

Համագումարն առաջարկում է ԽՍՀՄ-ի թյան  
և դաշնակից հանրապետությունների կենտրո-  
նական գործադիր կոմիտեներին և ժողովրդական  
կոմիսսարների խորհուրդներին գալիք 1925/26  
բյուջետային տարվա սկզբին հետևյալ գործնա-  
կան միջոցները կիրառել. ա) բանվորա-գյուղա-  
ցիական կարմիր բանակի նյութական կենցաղա-  
յին դրությունը բարվոքելու համար ավելացնել  
բաց թողնվող միջոցները, մասնավորապես նկա-  
տի առնելով բանակի բնակազուր (կադրային

կազմը). բ) վորակով և քանակով լավացնել բան-  
վորա-գյուղացիական կարմիր բանակին բաց թող-  
նվող բոլոր տեսակի պիտույքները. գ) ընդհա-  
նուր պետական և տեղական բյուջեներից բաց  
թողնվող դրամական միջոցներով լավացնել բան-  
վորա-գյուղացիական կարմիր բանակի բնակա-  
բանային-գործնոցային պայմանները, շինելով  
նոր շենքեր, վերանորոգելով հները և կահավո-  
րելով. դ) համապատասխան կոմմունալ բնակա-  
բանային դրույքների միջոցով, ինչպես նաև զին-  
վորաբնակ վայրերում բնակարանային տարա-  
ծությունների հատկացումների միջոցով առան-  
ձին ուշադրություն դարձնել թեթևացնելու և  
լայնացնելու բանվորա-գյուղացիական բանակի  
հրամանատարական, վարչական-տնտեսական և  
քաղաքական կազմի բնակարանային հարցը.  
ե) կարմիր բանակի և նավատորմի զորացրված-  
ների համար բոլոր քաղաքացիական հիմնարկնե-  
րում, ձեռնարկություններում և հաստատու-  
թյուններում ամրապնդել վորոշ պաշտոններ.  
զ) աշխատանքի մտնելու պայմանների տեսակե-  
տից բոլոր զորացրվածներին հավասարեցնել  
պրոֆմիության անդամներին. է) ուժեղացնել  
իմպերիալիստական, մանավանդ քաղաքացիական  
պատերազմների ինվալիդներին թոշակով ապահո-  
վելու աշխատանքը. ը) որենսդրական կարգով

առանձին կանոնադրութիւնն սշակել բանվորագլուղացիական բանակի վարչային կազմի թոշակառման մասին, բաց թողնելով զինվորական և ծովային գործերի ժողովրդական կոմիսսարիատի տրամադրութեան տակ անհրաժեշտ ֆոնդ. (թ) ապահովել կամիր-բանակայինների արտոնութիւնների որենսգրքի ռեալ իրականացումը, չթուլլատրելով խախտել նրանց ընտանիքների իրավունքները»:

Համագումարը նշեց, վոր աճում է նաև մեր կարմիր նավատորմիղը և մատնանշեց, վոր անհրաժեշտ է շարունակել նրա ամրապնդման աշխատանքը:

Համագումարը կանգ առավ նաև ողային նավատորմիղի վրա: Նա նշեց այն հաջողութիւնները, վոր ունի ողային նավատորմիղը: Հատկապես կարևոր է այն, վոր այժմ մենք մեր յերկրում կարող ենք այերոպլաններ շինել: Դեռ շատ մոտիկ անցյալում մենք ստիպված էինք շատ մեքենաներ և այերոպլաններ արտասահմանում գնել: Իսկ այժմ մեզ հաջողվել է կառուցել այն մեր գործարաններում, ըստ վորում մեր կառուցածներն արտասահմանում գնածներից վատ չեն: Այս հարցի առթիվ համագումարը վորոշել է.

«Համագումարը կառավարութեանն առա-

ջարկում է ամենակարճ ժամանակամիջոցում կենսագործել զինվորական ողային ուժերի զարգացման պլանը և միաժամակ միջոցներ ձեռք առնել բարձրացնելու ավիո-արդյունաբերութիւնն ու մոտորա-շինարարութիւնը այնքան, վորպեսզի հնարավոր լինի ապահովել քաղաքացիական և զինվորական ողային նավատորմիղի զարգացումը»:

Կարմիր բանակի ամրապնդման գործում մեծ ոգնութիւն են ցույց տվել՝ «Ողային նավատորմիղի ընկերութիւնը», «Դորբոխիմը» և «Զինվորական-գիտական ընկերութիւնը»: Համագումարը նշեց նրանց աշխատանքն իբրև շատ ոգտակար և առաջարկեց կառավարութեանն ապագայում ևս աջակցել այդ ընկերութիւններին:

Այսպիսով Համամիութենական III Համագումարը մանրասնորեն քննեց կարմիր բանակի հարցը և վորոշում հանեց, վորի կենսագործումը մեծ ոգուտ կտա կարմիր բանակին և կամրապնդի մեր խաղաղ աշխատանքի պաշտպանութիւնը:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Ներածութիւն . . . . .	3
2. Ի՞նչ են ուզում գյուղացիներն ու բան- վորները . . . . .	5
3. Խորհրդային իշխանութիւնը ձգտում է խաղաղության . . . . .	7
4. Ի՞նչպես են վերաբերվում մեզ բուր- ժուական յերկրները . . . . .	9
5. Ինչո՞ւ յե մեզ ատում բուրժուազիան . . . . .	12
6. Ի՞նչ է ուզում բուրժուազիան . . . . .	15
7. Բուրժուական յերկրները լավ չեն և . իրար հետ . . . . .	18
8. Ի՞նչպես պաշտպանել Խ. Ս. Հ. Մ.-ի . խաղաղ աշխատանքը . . . . .	20
9. Ի՞նչ է սովորում Կարմիր բանակը . . . . .	25
10. Ի՞նչ վորոշեց Խորհուրդների 3-րդ Համա- գումարը Կարմիր բանակի մասին . . . . .	27



40.982



ԳՆՆԸ 15 ԿՈՊ.